# ԱԲՈՎՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՈՐՈՇ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ ԵՎ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*Արարատյան բարբառը ըստ ձևաբանական դասակարգման պատկանում է ում ճյուղին։ Մինչև այժմ անվերապահ ընդունված է այն տեսակետը, որ այդ բարբառն ունի յոթ հոլով։ Բարբառի խոսվածքների մեծագույն մասում, իրոք, այդպես է, սակայն Աբովյանի շրջանի խոսվածքների հոլովման համակարգում կան տարբերություններ։ Յոթ հոլով ունեն միայն Քանաքեռի, Առինջի, Ջրվեժի և Նորքի խոսվածքները, իսկ Ակունքի, Կոտայքի, Զառի, Գեղաշենի, Գառնո, Էլարի (Աբովյան), Կաթնաղբյուրի միջճյուղային խոսվածքները, ինչպես նաև Սուլթանաբադի խոսվածքը*[1] *չունեն ներգոյական հոլով։ Վերջինիս իմաստն արտահայտվում է ներգոյական-հայցականով։*

Ուղղական հոլովն *իր կազմությամբ և շարահյուսական գործառույթներով նման է արդի գրական հայերենին։*

Սեռական և տրական հոլովները *բացարձակապես տարբերվում են միմյանցից։ Ի տարբերություն շատ բարբառների, ուսումնասիրվող խոսվածքներում սեռականը, առանց բացառության, հոդ չի ստանում։ Երկու հոլովն էլ նախադասության մեջ ունեն նույն կիրառությունը, ինչպես ժամանակակից հայերենում։*

Հայցական հոլովն *ունի կազմության հաստատուն ձև։ Իրի առում ունեցող գոյականների հայցականը՝ թե՛ անորոշ, թե՛ որոշյալ, նման է ուղղականին։ Անձ ցույց տվող հատուկ և հասարակ գոյականների հայցականը՝ անորոշ թե որոշյալ, տրականաձև է։ Իսկ եթե անձը կիրառվում է իրի առումով, հայցականը միշտ նման է ուղղականին։ Դրանք էլ հենց հայցականի ձևավորման յուրահատկություններն են։ Օրինակ՝ ջ՛ուրը||ճուրը էկէլ ա, ջ՛աղաչը||ճաղացը տարէ։ Բ՛ըժշկ՛ին կանչէք՝ բօքա (թող գնա) խիվրնդին*[2] *(ճիվանդին) տէնա, բայց՝ ճիվանդի վըրէն բ՛ըժիշկ կանչէք։*

*Գրաբարյան հոգնակի հայցականի բազմաթիվ ձևեր Ակունքի, Գառնո, Գեղաշենի, Կոտայքի, Զառի, Էլարի, Կաթնաղբյուրի խոսվածքներում օգտագործվում են որպես ուղիղ ձևեր, ինչպես՝ բանալիք>բ՛ալնիս||պալնիս*[3] *(դրա-*

---

1 *Սուլթանաբադը գտնվում է Իրանի խորքերում, ուր ապրում են այն հայերը, որոնց նախնիներին Շահ-Աբասը 1604 թ. բռնագաղթեցրեց Իրան։ Նրանց մի մասը 1946-ին վերադարձավ Հայաստան և բնակություն հաստատեց Արարատի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի շրջաններում։ Մոտ 400 տարի անցնելուց հետո էլ նրանք անաղարտ են պահել իրենց մայրենի բարբառը։*

2 *Գրաբարյան ճ հնչյունը Ակունքի, Գառնո, Կոտայքի, Կաթնաղբյուրի, Գեղաշենի խոսվածքներում, բառի բոլոր դիրքերում, որոշ բացառություններով դարձել է խ, իսկ մյուսներում մնացել է անփոփոխ։*

3 *Ակունքի, Գառնո, Կոտայքի, Զառի, Գեղաշենի, Էլարի խոսվածքները գրաբարյան բ, գ, դ ձայնեղ պայթականները և ձ, ջ ձայնեղ պայթաշփականները բառասկզբում, որպես Արարատյան բարբառի ընդհանուր հատկանիշ, վերածել են շնչեղ ձայնեղների՝ բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛. բա-*

փոխությամբ), ծախք>ծախս, կողպեք>կողբէս (դրափոխությամբ), հարսանիք>խառնիս||հարսնիս||հարսնիք, մորուք>մուրուս, չորք>չոռս, պահք>պախս||պաս, փոխք>փոխս, տանիք>տանիս, թաղիք>թաղիս (միայն Զառում), նմանակությամբ՝ երդիկ>հէռթիս (Զառում՝ յէրթիս)։

Բացառական հոլովը կազմվում է ից վերջավորությամբ, որը դրվում է ուղղականի, երբեմն՝ սեռականի հիմքին։ Կաթնաղբյուրի միջճյուղային խոսվածքում այդ հոլովը կազմվում է երկու ձևով՝ ում ճյուղի Արարատյան բարբառի և լ ճյուղի Խոյի բարբառի նման, այսինքն՝ և՛ ից, և՛ էն վերջավորություններով, ինչպես՝ սարից-սարէն, տաշտից-տաշտէն, տընից-տընէն։ Ակունքի, Գառնո, Կոտայքի, Էլարի, Զառի, Գեղաշենի, Կաթնաղբյուրի խոսվածքներում բացառականը կարող է գործածվել և՛ հոդով, և՛ առանց հոդի, իսկ Քանաքեռի, Առինջի, Ջրվեժի, Նորքի խոսվածքներում՝ միայն հոդով, ինչպես՝ յեգամրդիցը, էրէրունուցը, սարիցը, վարթիցը։

Գործիական հոլովը բացառապես ստանում է օվ վերջավորությունը, որն ավելանում է ուղղականի, որոշ դեպքերում նաև՝ սեռականի հիմքերին։ Այս հոլովում հոդառությունը կատարվում է նույն սկզբունքով, ինչպես բացառականինը։

Ներգոյական հոլովը կազմվում է հետևյալ կերպ. Քանաքեռի, Առինջի, Ջրվեժի, Նորքի խոսվածքներում առարկա ցույց տվող գոյականները ստանում են ըմ, իսկ տեղանունները՝ ում վերջավորությունները, որոնք դրվում են ուղղականի հիմքին, ինչպես՝ սարըմը, տաշտըմը, թերթըմը, բայց՝ Նորքումը, Հաշտարակումը, Էրէվանումը և այլն։ Ակունքի, Կոտայքի, Գառնո, Զառի, Գեղաշենի, Էլարի, Կաթնաղբյուրի, ինչպես և Սուլթանարադի խոսվածքները ներգոյականի իմաստը արտահայտում են ներգոյական-հայցականով, ինչպես՝ Բաղդադ էլ շատ խուրմա կա։ Դ՛ուսը||տուրսը շատ ցուռդ ա։ Մեր սարը շատ խոտ կա և այլն։ Անձ ցույց տվող, ինչպես նաև բազմաթիվ այլ գոյականների ու անորոշ դերբայի ներգոյականի իմաստը տրվում է սեռական հոլովով և մէջ կապով. օր.՝ մառթու մէջ, քամու մէջ, խօսալու մէջ և այլն։

Այսուհետև բերված օրինակներում նշվելու են միայն Քանաքեռի, Առինջի, Նորքի և Ջրվեժի խոսվածքների ներգոյականի ձևերը, որոնք դարձյալ հոդ են ստանում։

## Հոլովում

Քննարկվող խոսվածքներում հոլովումը հիմնականում կանոնավոր է։

Ի հոլովումն ինչպես շատ բարբառներում ու գրական լեզվում, այնպես էլ Արարատյան բարբառում ընդհանրական է։ Այն իրեն է ենթարկել գոյականների գերակշիռ մասը, որոշ բացառություններով՝ օտար փոխառյալ բառերը։ Ի հոլովման են ենթարկվում մյուս բոլոր հոլովումներին պատկանող բառերի հոգնակիները, ան հոլովման՝ միավանկ բառերի մի մասը, ինչպես՝ դառ-գ՛առի, թոռ-թոռի, ծոռ-ծոռի, բ՛եռ||պեռ-բ՛եռի և այլն։

---

բան>բ՛էրան, գարուն>գ՛արուն, դուռն>դ՛ուռ, ձիւն>ձ՛ուն, ջաղացք>ջ՛աղաչ։ Իսկ Կաթնաղբյուրի միջճյուղային խոսվածքը և Քանաքեռի, Ջրվեժի,, Առինջի, Նորքի խոսվածքները գրաբարյան նույն հնչյունները բառասկզբում դարձրել են խուլեր՝ պ, կ, տ, ծ, ճ, ինչպես՝ բարակ>պարագ, գինի>կէի նի, ղաղձ>տախց, ձոր>ծոր, ջուր>ճուր։

Հոլովման թեքույթներն են. սեռական՝ ի, տրական՝ ին, հայցական՝ ուղղականի կամ տրականի նման, բացառական՝ ից (ը) ||էն, գործիական՝ օվ (ը), ներգոյական՝ում||ըմ: Հասարակ գոյականները հոլովվում են և՛ հոդով, և՛ առանց հոդի։

| | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղ. | բ՛եռթ(ը)[4] ||պերթ(ը) | բ՛եռթէր(ը) ||պերթէր(ը) |
| Սեռ. | բ՛եռթի||պերթի | բ՛եռթէրի||պերթէրի |
| Տր. | բ՛եռթին||պերթին | բ՛եռթէրին||պերթէրին |
| Հայց. | բ՛եռթ(ը) ||պերթ(ը) | բ՛եռթէր(ը) ||պերթէր(ը) |
| Բաց. | բ՛եռթից(ը) պերթիցը||պեռթէն[5] | բ՛եռթէրից(ը) ||պերթէրիցը||պերթէրէն |
| Գործ. | բեռթօվ(ը) ||պերթօվը | բ՛եռթէրօվ(ը) ||պերթէրօվը |
| Ներգ. | — պերթըմը | — պէրթէրըմը |

Քննվող խոսվածքներում հոլովման ժամանակ հաճախ տեղի է ունենում ձայնավորների սղում կամ հնչյունափոխություն։

1. Երկվանկ և բազմավանկ բառերի վերջին փակ վանկի ա||ա̈ ձայնավորը կա՛մ սղվում է, կա՛մ վերածվում ը-ի։ Օրինակ՝ գ՛էրան- գ՛էրնի||կ՛էրնի[6], ձավար—ձավրի||ձա̈վրի, ախկատ—ախկըտի, աշխարք—աշխըրքի և այլն։ Գրական և կրոնական փոխառյալ բառերը չեն ենթարկվում այդ կանոնին, ինչպես՝ հրեշտակ>հրիշտակ—հրիշտակի, դատաստան>դադաստան—տադաստանի, պատարագ>պատարաք—պատարաքի։

2. Բառավերջի ա ձայնավորը առանց բացառության փոխարինվում է ի հոլովիչով։ Օրինակ՝ էրէխա—էրէխի, գաթա—գ՛ատի, տըղա—տըղի, սատանա—սատանի, ճամփա—ճամքի և այլն։ Այդ օրենքին ենթարկվում են նաև օտար փոխառյալ բառերը, ինչպես՝ մէշա (անտառ)—մէշի, գյուլլա—գյուլլի, բախչա—բախչի։ Այդ կարգի բոլոր բառերը հոգնակիում ստանում են f մասնիկը, որից առաջ այ-ն օրինաչափորեն դարձել է է, որը բառի թեքման ժամանակ չի հնչյունափոխվել. էրէխէք—էրէխէքի, սատանէք—սատանէքի, տըղէք—տըղէքի, մէշէք—մէշէքի և այլն։

3. Անց ածանցով կազմված բառերի մեջ ա-ն դարձյալ սղվում է. էրկուսանց—էրկըսնցի, տասանց—տասնցի և այլն։

4. Բառամիջի է ձայնավորը, եթե այն ստացվել է այլ հնչյուններից, մնում է անփոփոխ, ինչպես՝ այծ>էծ—էծի, տայգր>տէքըր—տէքրի, ծայր>ծէր—

---

[4] Ակունքի, Կոտայքի, Գառնո, Գեղաշենի, Ջառի, Էլարի, Կաթնաղբյուրի խոսվածքներում բառամիջի r ձայնորդը շնչեղ խուլերից, պայթաշփականներից և առաշնալեզվային պայթականներից առաջ դարձել է n, իսկ Քանաքեռի, Առինջի, Ջրվեժի և Նորքի խոսվածքներում մնացել է անփոփոխ։

[5] Այսուհետև բացառական հոլովի ից վերջավորության կողքին զուգահեռաբար կնշվի Կաթնաղբյուրի միջճյուղային խոսվածքի բացառականի երկրորդ ձևը՝ էն վերջավորությամբ։

[6] Բոլոր խոսվածքներում, որպես ընդհանուր օրինաչափություն, ետնալեզվային պայթականները է (ե), ի երբեմն նաև ա (ա̈) ձայնավորներից առաջ բառասկզբում և բառամիջում քմայնացել են՝ դառնալով գ՛, կ՛, ք՛։

ծէրի, *ծագ>ծէք*—ծէքի, *վառեակ>վաառէկ*—վաառէկի, *մացառ>մօցեռ*—մօցեռի: *Բացառություն է միայն ցորեն բառը՝ ցորեան>ցորէն*—ցորնի:

*5. Գրաբարյան շեշտակիր ի ձայնավորը միավանկ և բազմավանկ բառերի մեջ հոլովման ժամանակ կամ սղվում է, կամ հնչյունափոխվում ը-ի։ Օրինակ՝ գ՛ինձ*—գ՛ընձի||կրնձի, *շապիկ*—*շապկի*, *երդիկ>հէռթիս*—հէռթրսի, *առիք>հառիք*—հառքի *և այլն, իսկ շեշտից առաջ մնում է անփոփոխ, ինչպես՝ աւէրակ>ավիրակ*—ավիրակի, *սկեսուր>կիսուր*—կիսուրի, *ալևոր>խաալիվոր||հալիվոր*—խաալիվորի, *փեսուր>փիդուռ*—փիդուռի, *շերեփ>շիրէփ*—շիրէփի:

*6. Միավանկ և բազմավանկ բառերի միջին* ո||օ *ձայնավորը հոլովման ժամանակ սովորաբար չի հնչյունափոխվում կամ սղվում։ Բացառություն են միայն ծարոխ>չարօխ*—չարխի *և գ՛ըլօխ*—||*կրլօխ*—գ՛ըլխի, կրլխի:

*Գրաբարյան շեշտակիր* ու *ձայնավորը բառամիջում, առանց բացառության, վերածվում է ը-ի։ խուրձն>խուռց*—խըռցի, *բուրդ>բ՛ուռթ||պուռթ*—բ՛ըռթի, *կարկուտ*—կարկըտի, *կամուրջ>կարմունջ*—կարմընջի: *Այլ հնչյուններից առաջացած* ու-*ն բառամիջում, զգալի բացառություններով, սղվում է կամ հնչյունափոխվում ը-ի։ Օրինակներ՝ ալիւր>ալուր*—ալրի, *արիւն>արուն*—արնի, *աղբիւր>ախպուր||հախպուր*—նախպրի, *հարիւր>հարուր*—հարրի, *բայց՝ երկիւղ>յերգուղ*—յերգուղի: *Բացառությունները շատ են* ոյ>ու *հնչյունափոխության դեպքում. ճկոյթ>ճրկութ*—ճրկութի, *նմոյշ>նրմուշ*—նրմուշի, *պատրոյս>պադրուս*—պադրուսի, *պատրոյգ>պադրուք*—պադրուքի, *բայց՝ բոյն>բ՛ուն||պուն*—բ՛ընի, *բոյթ>բ՛ութ*—բ՛ըթի *և այլն։*

*Բոլոր խոսվածքներում բառավերջի* ու *ձայնավորը ի հոլովիչից առաջ եզակի թվում դարձել է* վ. *օրինակ՝ ուղղ. առու, լէզու, կադու, մէղու, սեռ. առվի, լէզվի, կադվի, մէղվի։*

*Վերը բերված գոյականների հոգնակի ուղղականը կազմելիս Քանաքեռի, Առինջի, Ջրվեժի, Նորքի խոսվածքներում բառավերջի* ու-*ն մնում է անփոփոխ, ինչպես՝ առունէր, կադունէր, իսկ մյուս խոսվածքներում* ու-*ն ըստ օրենքի վերածվում է* վ-*ի.* հառվընէր, կադվընէր, լէզվընէր *և այլն։*

Ու հոլովումն *իր կենսունակությամբ երկրորդն է։ Այս հոլովման ենթարկվում են* ի-*ով վերջացող գոյականները, անորոշ դերբայը,* տէր[7], աստըված[8], մառթ *բառերը։ Հոլովներն ստանում են հետևյալ վերջավորությունները. սեռ.՝* ու, *տր.՝* ուն, *հայց. նման է ուղղականին կամ տրականին, բաց.՝* ուցը||էն, *գործ.՝* օվ(ը), *ներգ.՝* ում||ըմ: *Հոլովման ժամանակ բառավերջի ի ձայնավորը սղվում է։*

---

[7] *Տէր բառը Ակունքի, Կաթնաղբյուրի, Էլարի, Գեղաշենի, ինչպես և Աշտարակի խոսվածքներում ենթարկվել է նաև օշ հոլովման՝ և հավելվածականով. ինչպես՝ տէր*-տիրօնշ: *Տէր բառը նույն ձևով՝ և՛* ու, *և՛ օնշ հոլովիչներով է հոլովվում նաև բարդությունների մեջ, ինչպես՝ ապրանքատէր*-ապրանքատիրու-օնշ, *տրնատէր*-տրնատիրու-օնշ, *էրեխատէր*-էրէխատիրու-օնշ *և այլն։*

[8] *Աստված բառը Գառնո խոսվածքում փոխազդեցական հնչյունափոխությամբ դարձել է աասված, իսկ հետո ընկել է մի ս-ն և դարձել է* տասված:

*Ահա հոլովման պատկերը.*

| | | | |
|---|---|---|---|
| *Ուղղ.* | *գ՛ինի* ‖ *կ՛ինի* | *մառթ*[10] | *էրէբունի* |
| *Սեռ.* | *գ՛ինու* ‖ *կ՛ինու* | *մառթու* | *էրէբունու* |
| *Տր.* | *գ՛ինուն* ‖ *կ՛ինուն* | *մառթուն* | *էրէբունուն* |
| *Հայց.* | *գ՛ինի* ‖ *կ՛ինի* | *մառթուն* | *էրէբունի* |
| *Բաց.* | *գ՛ինուց* ‖ *կ՛ինուցը*[9] | *մառթուցը*‖*մառթէն* | *էրէբունուցը* |
| *Գործ.* | *գ՛ինով* ‖ *կ՛ինովը* | *մառթով(ը)* | *էրէբունովը* |
| *Ներգ.* | — — | — | *էրէբունումը* |

*Ան հոլովման պատկանող բառերի թիվը սահմանափակ է։ Դրանք են՝ աշուն, դ՛ուռ, գ՛արուն, մանուկ, մուկ, յեզ, ձ՛ի, ձ՛ուկ։ Բառերը սեռականում ստանում են ան, տրականում ան(ը), հայցականում՝ ուղղականի ձևը, բացառականում՝ ից(ը)‖էն, գործիականում՝ օվ(ը) վերջավորությունները։ Ներգոյականի ձևը բացակայում է բոլոր խոսվածքներում։ Այդ հոլովման ենթարկվող գոյականների եզակի բացառականը և գործիականը կազմվում են ուղղականից, գ՛արուն բառինը՝ սեռականից, իսկ մուկ բառինը՝ և՛ ուղղականից, և՛ սեռականից։ Այդ գոյականների հոգնակիները, առանց բացառության, կազմվում են ուղղականից՝ գ՛արուններ, դ՛ռներ, աշուններ, յեզներ, ձ՛ըկներ, մըկներ։*

*Ահա հոլովման պատկերը*[11].

| | | | |
|---|---|---|---|
| *Ուղղ.* | *դ՛ուռը(ը)* | *աշուն(ը)*[12] | *յեզ(ը)* |
| *Սեռ.* | *դ՛ռան* | *աշնան* | *յեզան* |
| *Տր.* | *դ՛ռանը* | *աշնանը* | *յեզանը* |
| *Հայց.* | *դ՛ուռ(ը)* | *աշուն(ը)* | *յեզ(ը)* |
| *Բաց.* | *դ՛ռնիցը*‖*տռունէն* | *աշունից(ը)*[13] | *յեզից(ը)*‖*էն* |
| *Գործ.* | *դ՛ռնով* | *աշունով* | *յեզով(ը)* |

| | |
|---|---|
| *ձ՛ուկ(ը)* | *մուկ(ը)* |
| *ձ՛ըկան* | *մըկան* |
| *ձ՛ըկանը* | *մըկանը* |
| *ձ՛ուկ(ը)* | *մուկ(ը)* |
| *ձ՛ըկից(ը)*‖*ծըկնէն* | *մըկից(ը)*‖*մըկնէն* |
| *ձ՛ըկով(ը)* | *մըկով(ը)* |

*Վերջին երեք բառերը հոլովվում են նաև ի հոլովմամբ. յեզ—*յեզի, *ձուկ—*ձըկի, *մուկ—*մըկի:

*Ակունքի, Գառնո, Կաթնաղբյուրի խոսվածքներում* յեզ *բառի նման է հոլովվում* ձիը (ծիը) *գոյականը, ինչպես՝ ձ՛իյան, ձ՛իյանը, ձ՛իյանից(ը) և այլն։*

---

9 *Կաթնաղբյուրի խոսվածքը* *կ՛ինուց ձևից բացի ունի նաև* *կ՛ինիէն ձևը։*

10 *Մառթ բառի հոգնակիի կազմությունը, հակառակ գրական լեզվի, ստանում է էր մասնիկը՝* մառթէր: *Այս բառի համար անսովոր չէ նաև ի հոլովումը։*

11 *Առինջի, Քանաքեռի, Ջրվեժի, Նորքի, Կաթնաղբյուրի խոսվածքներում գարուն, դուռ, ձուկ բառերի ձայնեղները, օրենքի համաձայն, դառնում են խուլեր՝ կարուն, տուռ, ծուկ։*

12 *Այս բառը աշունք ձևով Ակունքի, Գառնո, Գեղաշենի, Կոտայքի խոսվածքներում ենթարկվում է նաև և՛ ի, և՛* վա *հոլովումներին՝ աշունքի, աշունքվա։*

13 *Կաթնաղբյուրի խոսվածքը այս բառի բացառականը կազմում է սեռականից՝* աշնանէն:

Մանուկ բառը խոսվածքներում գործածվում է հարադրությունների մեջ և ունի միայն ուղղական, սեռական և հայցական հոլովաձևերը, ինչպես՝ ուղղ. մէր ու մանուկ, սեռ. մor ու մանկան, հայց. մէր ու մանուկ կամ մor ու մանկան: Մէր ու մանուկ ուրախ էն. մor ու մանկան լացը մառթու սիրդ ա կըդրոտըմ. մէր ու մանուկ ուրացէր էն։

Աղեղն բառը, որ քննարկվող խոսվածքներում դրափոխությամբ և ն-ի անկումով դարձել է անէղ, գործածական է միայն ուղղական և սեռական հոլովներում՝ անէղ—անէղան: Նէտ ու անէղը կըպնի դոշիտ (անեծք). անէղան լարի նըման ձ՚ըքված ա։

Վա ճոլովման պատկանում է ժամանակ ցույց տվող բառերի զգալի մասը։ Սեռականը ստանում է վա, տրականը՝ վա||վան, բացառականը՝ ից(ը) ||էն: Ժամանակացույց բառերից մի քանիսը չունեն գործիական և ներգոյական հոլովներ։ Քանաքեռի, Առինշի, Ջրվեժի, Նորքի խոսվածքներում այդ հոլովաձևերն ունեն միայն ամիս, օր, շաբաթ, տարի բառերը, ինչպես՝ ամսով, օրով, շափաթով, տարով. ամսըմ, օրըմ, շափաթըմ, տարըմ: Դրանցից ամիս և շաբաթ բառերը ենթարկվում են նաև ի հոլովման։ Բացառական ու գործիական հոլովները կարող են կազմվել և՛ ուղղականից, և՛ սեռականից, իսկ ներգոյականը՝ միայն ուղղականից։

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | իրիգուն (հիրգուն) | էքուց\|\|հէքուց |
| Սեռ. | իրիգվա | էքուցվա |
| Տր. | իրիգվան | էքուցվան |
| Հայց. | իրիգուն | էքուց |
| Բաց. | իրիգվանից | էքուցվանիցը |
| Գործ. | — | էքուցվանովը |
| Ներգ. | — | — |

| | |
|---|---|
| հէրու (խէրու) | ամիս |
| հէրվա | ամսըվա\|\|ամսի |
| հէրվան | ամսըվան\|\|ամսին |
| հէրու | ամիս |
| հէրվանիցը | ամսըվանիցը\|\|ամսիցը\|\|էն |
| հէրվանով | ամսվանովը\|\|ամսովը |
| — | ամսըմը |

3 հոլովման պատկանող բառերը, ինչպես շատ բարբառներում ու ժամանակակից արևելահայ գրական լեզվում, այնպես էլ Արարատյան բարբառում ունեն հավաքական իմաստ։ Դրանք անf, էնf, օնf ածանցներով բառերն են, որոնք բացառապես անձ են ցույց տալիս։ Հոլովման ժամանակ բառերը սեռականում ստանում են ց վերջավորություն։ Սեռական, տրական և հայցական հոլովները ձևով նման են իրար։ Որպես անձնանիշ գոյականներ՝ դրանք նույնպես չունեն ներգոյական հոլով։

*Հոլովման պատկերը.*

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | հէրանք‖խէրանք | Սողոյէնք | խընամօնք |
| Սեռ. | հէրանց | Սողոյէնց | խընամօնց |
| Տր. | հէրանց | Սողոյէնց | խընամօնց |
| Հայց. | հէրանց | Սողոյէնց | խընամօնց |
| Բաց. | հէրանցիցը‖խէրանցէն | Սողոյէնցիցը‖էն | խընամօնցից(ը) ‖էն |
| Գործ. | հէրանցօվ(ը) | Սողոյէնցօվ(ը) | խընամօնցօվ(ը) |

Ներքին թեքման ա հոլովման ենթարկվում են ուրուն ածանց ունեցող և տուն, շուն բառերը։ Հոլովման առանձնահատկությունն այն է, որ ուղղական հոլովի վերջին վանկի ու ձայնավորը եզակի սեռականում փոխվում է ա-ի։ Բացառականը և գործիականը կազմվում են ուղղականից, ինչպես՝ տունտընից‖տընէն—տընով. ախպէրություն—ախպէրության—ախպէրությունից—ախպէրությունով։ Ուրուն ածանց ունեցող որոշ բառեր կարող են ենթարկվել նաև ի հոլովման. լավություն—լավրթունի. Քու լավրթունի տակից դ՛ուս գ՛ըգ՛ամ։

Օ հոլովման պատկանող բառերը եզակի թվում կրում են ներքին փոփոխություն։ Բառամիջի ձայնավորը սեռական հոլովում փոխվում է օ-ի։ Տրական և հայցական հոլովներն ստանում են օրը, բացառականը՝ իցը) ‖էն, գործիականը՝ օվ(ը) վերջավորությունները։ Բացակայում է ներգոյականը։ Այս հոլովման ենթարկվում են հետևյալ բառերը՝ քուր[14], ախպէր, հէր‖խէր, մէր, տէքը, անէր[15]։ Բոլոր բառերը հոգնակիում կանոնավոր կերպով ստանում են էր կամ նէր վերջավորությունները։

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | քուր | ախպէր | մէր |
| Սեռ. | քըվօր | ախպօր | մօր |
| Տր. | քըվօրը | ախպօրը | մօրը |
| Հայց. | քըվօրը | ախպօրը | մօրը |
| Բաց. | քըվօրիցը‖էն | ախպօրիցը‖էն | մօրիցը‖էն |
| Գործ. | քըվօրօվ(ը) | ախպօրօվ(ը) | մօրօվ(ը) |

### Հոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | քուրէր | ախպէրնէր | մէրէր |
| Սեռ. | քուրէրի | ախպէրնէրի | մէրէրի |
| Տր. | քուրէրին | ախպէրնէրին | մէրէրին |
| Հայց. | քուրէրին | ախպէրնէրին | մէրէրին |
| Բաց. | քուրէրիցը‖էն | ախպէրնէրիցը‖էն | մէրէրիցը‖էր |
| Գործ. | քուրէրօվ(ը) | ախպէրնէրօվ(ը) | մէրէրօվ(ը) |

---

[14] Այս բառը ու>վ հնչյունափոխությամբ և օ հոլովիչի հավելումով սեռականում դարձել է քըվօր։

[15] Վերջին երկու բառերը ենթարկվում են նաև ի հոլովման՝ տէքրի, անէրի։ Անէր բառի բացառականը և գործիականը կազմվում են ուղղականից։

Ախպէր, հէր, մէր բառերից կազմված բարդությունները (եթե դրանք վերջին բաղադրիչներն են) հոլովվում են նույն կերպ, ինչպես՝

| | | |
|---|---|---|
| Սանախէր (սանահէր) | քավորմէր | հրրոխպէր (խրրոխպէր) |
| սանախօր | քավորմօր | հրրոխպօր |

Քուր բառը բարդությունների մեջ ենթարկվում է ի հոլովման.

խորքուր-խorքուրի, մորքուր-մorքուրի:

Անկանոն հոլովումներ.— Որոշ բառեր շեղվում են հոլովման ընդհանուր կանոններից։ Ախշիկ, կրնիկ, թունդիր բառերը ենթարկվում են արտաքին թեքման ա հոլովման։ Ախշիկ և կրնիկ բառերի բացառականն ու գործիականը կազմվում են տրականից, իսկ թունդիր բառինը՝ ուղղականից։

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | ախշիկ | կրնիկ | թունդիր(ը) |
| Սեռ. | ախշրկա | կրնգա | թունդրա |
| Տր. | ախշրկան | կրնգան | թունդրան |
| Հայց. | ախշրկան | կրնգան | թունդիր(ը) |
| Բաց. | ախշրկանից(ը) ||էն | կրնգանից(ը) ||էն | թունդրից(ը) ||էն |
| Գործ. | ախշրկանով(ը) | կրնգանով(ը) | թունդրրով(ը) |
| Ներգ. | — | — | թունդրրում(ը) |

Հիշյալ բառերը հոգնակիում ենթարկվում են ի հոլովման՝ ախշինէր, կրնգընէր (նաև՝ կրնանիք), թունդիրնէր. ախշինէրի, կրնգրնէրի (կրնանիքի), թունդիրնէրի:

կրնիկ բառի նման են հոլովվում նաև դրանից բարդված ախպօրկրնիկ, տէրօրկրնիկ, հրրոխպօրկրնիկ բառերը։

Հետաքրքրություն է ներկայացնում տեղանունների հոլովումը։ Այդ բառերը, որ նույնպես ենթարկվում են ա հոլովման, միայն սեռական հոլովում են ստանում հիշյալ հոլովիչը։ Մյուս հոլովները կազմվում են ուղղականից և հոլովվում են ի հոլովմամբ։ Այսպես՝ Բաշ՛եղա (Ակունք) չ՛ըրէրը, Արա մուսա գ՛ազարը, Զառա հացը, Հաշտարակա գ՛ինին, Ցելկավանա քամին։ Այդ բառերը կարող են ենթարկվել նաև ի հոլովման.

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | Զառ | Ռ՛էղառթ |
| Սեռ. | Զառա | Ռ՛էղառթա |
| Տր. | Զառին | Ռ՛էղառթին |
| Հայց. | Զառ | Ռ՛էղառթ |
| Բաց. | Զառից(ը) ||էն | Ռ՛էղառթից(ը) ||էն |
| Գործ. | Զառով(ը) | Ռ՛էղառթով(ը) |
| Ներգ. | Զառում | Ռ՛էղառթում |

## Հարադիր բարդությունների հոլովումը

Այս հոլովման առանձնահատկությունն այն է, որ հոլովվում է միայն երկրորդ բաղադրիչը, իսկ առաջինը, բացի հէր, մէր, ախպէր բառերից, մնում է անփոփոխ։ Այդ բառերն ունեն միայն սեռական հոլովաձև, մյուս բոլոր ձևերը նման են սեռականին։ Հոգնակի հոլովման ժամանակ հիշյալ բառերը մնում են անփոփոխ։ Եզակի հոլովման ժամանակ հարադրության երկրորդ բաղադրիչը կարող է գործածվել և՛ հոդով, և՛ առանց հոդի, իսկ հոգնակիի դեպքում՝ միայն հոդով։ Հոգնակիում բարդության առաջին բաղադրիչը միշտ մնում է եզակի և երբեք հոդ չի ստանում։

Հոլովման պատկերը հետևյալն է.

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | Սար ու ձ՛որ(ը) ‖ծոր(ը) | մէր ու ախպէր |
| Սեռ. | սար ու ձ՛որի‖ծորի | մօր ու ախպօր |
| Տր. | սար ու ձ՛որին‖ծորին | մօր ու ախպօրը |
| Հայց. | սար ու ձ՛որ(ը) ‖ծորը | մօր ու ախպօրը |
| Բաց. | սար ու ձ՛որից(ը) ‖ծորիցը‖էն | մօր ու ախպօրից(ը) |
| Գործ. | սար ու ձ՛որով‖ծորովը | մօր ու ախպօրով(ը) |
| Ներգ. | սար ու ծորըմ | — |

### Հոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | սար ու ձ՛որէրը‖ծորէրը | մէր ու ախպէրները |
| Սեռ. | սար ու ձ՛որէրի‖ծորէրի | մէր ու ախպէրների |
| Տր. | սար ու ձ՛որէրին‖ծորէրին | մէր ու ախպէրներին |
| Հայց. | սար ու ձ՛որէրը‖ծորէրը | մէր ու ախպէրներին |
| Բաց. | սար ու ձ՛որէրից(ը) ‖ծորէրիցը | մէր ու ախպէրներից(ը)‖էն |
| Գործ. | սար ու ձ՛որէրով(ը) ‖ծորէրովը | մէր ու ախպէրներով(ը) |
| Ներգ. | սար ու ծորէրըմ | — |

Կարելի է ենթադրել.

1. Արարատյան բարբառի քննարկվող խոսվածքներում, հակառակ շատ բարբառների, սեռական ու տրական հոլովներն ունեն կայուն ձևեր ու որոշակիորեն տարբերվում են միմյանցից։

Հայցականը նույնպես ունի իր կազմության առանձնահատկությունները՝ իրի առումով գործածվելիս նմանվելով ուղղականին, անձի առումով գործածվելիս՝ տրականին։ Հայցականի շատ ձևեր երբեմն օգտագործվում են որպես ուղիղ ձևեր։

Խոսվածքների մի մասն ունի ներգոյական հոլով, իսկ մի մասը այդ հոլովի իմաստը արտահայտում է ներգոյական-հայցականով։

2. Բարբառի խոսվածքների ընդհանրական հոլովումն է ի-ն, որն իրեն է ենթարկել գոյականների գերակշիռ մասը։ Այդ հոլովումն այստեղ ավելի մեծ ընդհանրություն է ներկայացնում, քան շատ բարբառներում ու արդի արևելա-

*հայ գրական լեզվում։ Այն շարունակ ընդլայնում է իր ոլորտը՝ ներառնելով մյուս հոլովումներին պատկանող նորանոր բառեր։*

*3. Ինչպես ամբողջ Արարատյան բարբառի, նույնպես և քննարկվող խոսվածքների գոյականների հոլովումը ներկայացնում է մի պարզ ու կուռ համակարգ, որն իր դրսևորումներով նման է արդի գրական լեզվին։ Եղած տարբերությունները հնչյունական են։ Այս փաստը նույնպես մի կարևոր ապացույց է այն բանի, թե ինչու է Արարատյան բարբառը դարձել ժամանակակից արևելահայ գրական լեզվի հիմքը։*

## СКЛОНЕНИЯ И СИСТЕМА СКЛОНЕНИЯ НЕКОТОРЫХ ГОВОРОВ АБОВЯНСКОГО РАЙОНА

РАЗМИК МАРКОСЯН

### Резюме

Группы говоров Араратского диалекта, относящихся к ветви - *ում* (-ум), хотя и сходны по многим признакам, однако в их системе склонения имеются различия.

Предложный падеж имеют только некоторые говоры, часть же говоров пользуется предложно-винительным падежом. В группе говоров Абовянского района, в отличие от других диалектов, формы родительного и дательного падежей устойчивы и определенно отличаются друг от друга. Винительный падеж в этих говорах весьма своеобразен: неодушевленное существительное в винительном падеже имеет форму именительного, а одушевленное—дательного падежа. Наиболее распространенным в данной группе говоров является склонение -*ի* (-и).